

J. M. THIERZY, P. DUNNABEDIAN, Armenian Art, New York, Harry N. Abrams Publ., 1989, 623 p., III.

Ժ. Մ. ԹԻԵՐԶԻ, Պ. ՏՈՆԱԲԵԴԻԱՆ, Հայկական արվեստ, Նյու Յորք, Հերբերտ Ն. Աբրահամ, 1989, 623 էջ, III.

Դեռևս 1937 թ. Փարիզում ֆրանսերեն լեզվով լույս տեսավ Ժան Միշլե Թիերրիի և Պատմիկ Տոնապեդիանի «Հայկական արվեստ» չափով գիրքը, իսկ 1989 թ. անգլերեն ընթերցողին հրաժեշտը նույն հատորի անգլերեն թարգմանությունը՝ հրատարակված Նյու Յորքում, Ամերիկայի Հայ առաքելական եկեղեցու առաջնորդարանի և Կիլիկիայի կաթողիկոսարանի համագործակցությամբ, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի նյութական օժանդակությամբ:

Գիրքը բաղկացած է երկու մասից՝ հողվածների պատմական ու տեսական բաժին և հուշարձանների համահավաք այբբենական ցուցակ: Գրքի առաջին մասի հեղինակն է Փարիզի Արևելյան լեզուների ինստիտուտի հայ մշակույթի պատմության դասախոս դոկտոր Ժան Միշլե Թիերրին, իսկ պատմության և արվեստագիտության դոկտոր, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի արվեստագիտության դոկտոր Պատրիկ Տոնապեդիանը ներկայացրել է հայկական հուշարձանների համահավաք այբբենական ցուցակը՝ «Հայկական գլխավոր բնակավայրեր և հուշարձաններ» վերնագրով:

Աշխատությունը սկսվում է հայագիտության երախտավոր Սիրարփի Տեր-Ներսեսյանի հակիրճ նախաբանով: Տարբեր մենագրություններ ու հողվածներ են նվիրվել հայ մշակույթի այս կամ այն հարցերին, այս կամ այն հուշարձաններին, բայց սույն գիրքն իր մեջ պարփակում է մի շատ մեծ ժամանակահատված (մ. թ. ա. VI դ. — մ. թ. XVIII դ.), պատմական ու ներկա Հայաստանի միջնադարյան գաղթօջախների անթիվ հուշարձաններ: Տեր-Ներսեսյանը գիրքը որակում է որպես նորագույն ուսումնասիրությունների լույսի ներքո գրված վերջին տարիների լավագույն աշխատություններից մեկը, որտեղ տեսական ու փաստագրական նյութը (թվով 186 գունավոր լուսանկարներ և համահավաք զուգակցող հազարի հասնող սև ու սպիտակ լուսանկարներ) այնքան հարուստ է, որ սույն բնագավառն իր ողջ հարստությամբ ու ճոխությամբ է ներկայանում ընթերցողներին:

Հայկական մշակույթը ներկայացնող հրատարակչական համառոտ ակնարկի հեղինակն է գրքի խմբագիր Անն դը Մարժըրին: Նա գրում է, որ սկսած XIX դ. հայ արվեստը գրավել է Արևմուտքի ուշադրությունը, իսկ այսօր այն մնալուն տեղ ունի համաշխարհային քաղաքակրթության թանգարանում: Սակայն գոյատևելով բացառիկ երկար մի ժամանակահատվածում և հարտարապետական, մանրանկարչական ու գեղարվեստի այլ գլուխգործոցներ ծնելով, հայ մշակույթը առանձնահատուկ դիրք է գրավում մյուս երկրների շարքում: Քիչ ժողովուրդներ են ունեցել նման լավագույն ողբերգական ճակատագիր ու դրանով հանդերձ ուժ գտել հարատևելու և ստեղծագործելու:

Պատմական-տեսական հատվածը (Ժ. Թիերրի) բաղկացած է 5 խոշոր գլուխներից, որտեղ ուսումնասիրվում են պատմություն, հարտարապետություն, քանդակագործություն, զարդարվեստ, որմնանկարչություն և այլ կիրառական արվեստներ: Ժ. Թիերրին տալիս է հայ ժողովրդի պատմության և մշակույթի ընդհանուր շարադրանքը, զուգահեռներ անցկացնելով հարևան երկրների արվեստների հետ, մեջբերելով հայ միջնադարյան մշակույթի՝ արդի այլազգի ուսումնասիրողներին և, այս բնագավառում բոլոր ձեռքբերումները ի մի բերելով, փորձում է ներկայացնել մի ամբողջական ակնարկ: Թիերրիի մի շարք գրությունների հետ, սակայն, դժվար է համաձայնել: Եզրակացությունն ենթադրելի բխում է այն միտքից, որ հայկական արվեստը ներմուծված է գրքից, որ այն փոխառությունների ու իր վրա կրած ազդեցությունների մի շղթա է: Դրանով հանդերձ հեղինակը գրում է, թե հայ արվեստը իր գոյության ողջ ընթացքում պայքարել է «թշնամի» արվեստների կողքին (քաղկեդոնական, իսլամական), բայց, այնուամենայնիվ, զարգացել է ինքնուրույն և մյուսներից արմատապես տարբերվում է (էջ 352): Այստեղ հակասու-

թյունն ակնհայտ է, իսկ հայ մշակույթի թողած ազդեցության մասին ժ. Թիերրին վերապահությամբ է արտահայտվում և, մեջբերելով Յ. Ստրժիգովսկուն (որն իր ժամանակին համոզիչ կերպով ապացուցեց, որ բյուզանդական, ռոմանական ու գոթական արվեստների ակունքները գտնվում են հայկականում)<sup>1</sup>, գրում է, թե ավստրիացի մեծ գիտնականի դրույթները զուրկ են գիտականությունից: Նա ընդունում է հայկական արվեստի որոշակի ազդեցություն միայն Վրաստանի ու Աղվանքի մշակույթի վրա, այն էլ սոսկ վազ քրիստոնեական շրջանում: Այնուամենայնիվ, ակնհայտ փաստների ճնշման տակ Թիերրին չի կարողանում ընդունել հայկական արվեստի ազդեցությունը սելջուկյան արվեստի վրա (էջ 357), թեպետ գրում է, որ այդ ազդեցությունը այնքան էլ ուժեղ չի եղել: Նշենք, որ ռուսամասիրողների համար պարզ է հատկապես Անատոլիայի հայկական քաղաքների թյուրք-ղամարանների ու իսլամի գերեզմանաքարերի վրա հայկական աննախադեպ մեծ դրոշմը՝ լինի դա արտաքին ճարտարապետական ձև, ներքին հատակագծային լուծում, թե քանդակազարդ: Ոչ մի խոսք չկա նվիրված հայկական բազարանատիպ եկեղեցիների տարածման մասին, որի վկաներն են բազմաթիվ հուշարձանները՝ Հունաստանից մինչև Իսպանիա, ներառյալ Իտալիան ու Ֆրանսիան: Համենայնիվ հայերի համար անմատչելի Թուրքիայի տարածքի մեր հուշարձանների ռուսամասիրության ու հաշվառման գործը (Թիերրի ամուսինները տարբեր տարիներին զանազան դժվարությունների, երբեմն նույնիսկ արգելքների ու կալանքի գնով շրջել են, լուսանկարել ու չափազերել այդ հուշարձանները):

«Փաստագրություն» վերնագրված փոքրիկ գլուխը ընթերցողներին է ներկայացնում ժ. Թիերրիի օգտագործած՝ հայ մշակույթի ժամանակագրական պարբերացման փաստավավերական նյութը, այսինքն, վերոհիշյալ ժամանակահատվածում եկեղեցական ինչ տիպեր են գոյություն ունեցել, բարավորներն ու բարձրաքանդակները ինչ մոտիվներով են զարդարվել, մանրանկարչության և կիրառական արվեստի մեջ ինչ ուղղություններ են եղել և այլն:

Գրքի երկրորդ մեծ հատվածն է «Հայկական գլխավոր բնակավայրեր և հուշարձաններ» խորագիրը կրող զուտ ճարտարապետական բաժինը (Պ. Տոնապետյան): Հանրագիտարանային բնույթի այս ռուսամասիրությունը (150 էջ, 1000-ի չափ լուսանկարներ ու հատակագծեր, մոտ 100 բնակավայրերի հուշարձաններ) ամփոփ ձևով առավելագույն տեղեկություններ է հաղորդում ընդգրկված կոթողների մասին: Պատրիկ Տոնապետյանը ամենայն բախնդրությամբ է կատարել իր աշխատանքը: Նա բազմիցս երկար ժամանակով եղել է Հայաստանում, այցելել պատմության և մշակույթի հուշարձանները և հեղինակ է մի շարք արժեքավոր ռուսամասիրությունների (հատկապես Վայոց ձորի ճարտարապետական դպրոցին և Մոմիկ վարդապետին նվիրված):

Գրքը եզրափակում են մասնագետների համար հույժ օգտակար աղյուսակներն ու ցուցակները. հայկական եկեղեցաշինական հատակագծային տիպերի և ճարտարապետական որոշ մանրամասների (խոյակներ, զարդերիզներ, պարակալներ, շքամուտքեր) դասակարգումները, հայ արվեստի ժամանակագրական, ինչպես նաև արքայական տոհմերի ծագումնաբանական աղյուսակները, հակիրճ բառացանկը, օգտագործված գրականության ցուցակը, անվանացանկը:

Ժ. Թիերրիի և Պ. Տոնապետյանի հեղինակած գիրքը կարևոր ներդրում է հայ մշակույթի պատմության և ընդհանրապես հայագիտության մեջ՝ իր փաստագրական հարուստ նյութի, բարձրորակ լուսանկարների շնորհիվ: Լավ կլինի, որ սույն աշխատությունը լույս ընծայվեր հայերեն և ռուսերեն լեզուներով:

Ա. Ժ. ՀԱԼԱՋՅԱՆ

1. J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.